ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0024, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1

«____» _____ 2021թ.

Հ _____

ԱՁ Արման Շամխալյանին

(ՀՎՀՀ 26550141)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր միջև 25.03.2021թ.-ին կնքված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-21/24 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում 15.07.2021թ.-ից մինչ օրս պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարում Ձեր կողմից չի իրականացվել: Չի մատակարարվել 6440 լիտր խմելու ջուր և 17600 հատ մեկանգամյա օգտագործման բաժակներ: Պատասխանատու ստորաբաժանման զանգերին և նամակներին չեք պատասխանել, ինչպես նաև մատակարարումների վերաբերյալ մեզ ոչինչ չեք հայտնել:

Ձեր կողմից խախտվել է պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետները, ինչը պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն համարվում է Ձեր կողմից պայմանագրի էական խախտում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 2021 թվականի դեկտեմբերի 28-ին մասնակի՝ 334,264 (երեք հարյուր երեսունչորս հազար երկու հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովումների համար ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը համապատասխան վճարման պահանջագրերով ներկայացվում է Ձեր ընկերությանը սպասարկող բանկին, իսկ Ձեր ընկերության տվյալները ուղարկվում է լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

Աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

28.12.2021